

Ժան Սոպիեցքիի նպատակներէն մէկն էր Օսմանեան կայսրութեան փճացումը: Ասոր համար դիւանագիտական լայն գործունէութեան մը կ'սկսի ո՛չ միայն Պալքաններու, այլև Ասիոյ մէջ: Այս նպատակով լե՛ն թագաւորը կը փորձէ զինակից դարձնել Պարսկաստանը, որ անընդհատ կռիւի մէջ էր Օսմանցիներու հետ: Ան քանի մը դեսպաններ կը զրկէ Պարսից Շահին և կը վարէ բանակցութիւններ, որոնց տեղեակ էր Պապը:

Շատ հետաքրքրական է գիտնալ, թէ լե՛ն թագաւորը ծրագրած էր նաև թուրքերու կռնակը՝ Արեւելքի մէջ ստեղծել քրիստոնեայ հայ պետութիւն մը: Ասոր համար 1678ին պատուիրակութիւն մը կը զրկէ Պոլիս, ուր այդ պահուն կը գտնուէր Յակոբ կաթողիկոս Զուղայեցի, Իսրայէլ Օրիի հետ, Եւրոպա անցնելու և Պարսկահայերու ազատութեան համար քրիստոնեայ պետութեանց ու Պապին միջամտութիւնը խնդրելու:

Լե՛ն պատուիրակութեան մէջ կային նաև Հայեր: Զուղայեցի Յակոբ կաթողիկոս Պոլսոյ մէջ կը մեռնի 1680 Օգոստ. 14ին, և բանակցութիւնները կ'ընդհատուին:

Ժան Սոպիեցքի, սակայն, կը շարունակէ նոյն նպատակով իր բանակցութիւնները Զուղայեցիի յաջորդող Եղիազար Այնթապցի կաթողիկոսին (1680—1691) հետ:

Նամակի մը մէջ, որ ուղղուած էր անոր, Սոպիեցքի մեծ յարգանքով կը խօսէր Յակոբ Զուղայեցիի մասին և կ'ըսէր, թէ անկէ ստացած նամակները կը պահէր իր դիւանին մէջ:

Լե՛ն թագաւորը յաջորդաբար կը դիմէ Եղիազար Այնթապցի և Նահապետ Եղեսացի (1691—1705)